թելով Ալանաց՝ ստացաւ նոցա Սաթ կամ Զաթ թագաւորի դուստր Սաթինիկին իրեն կին։ Նոյնպիսի հանդիսիւ 285 թուին անցել է այն դռնովն և Խոսրով մեծ՝ Հայոց թագաւորն՝ յաղթելով բոլոր լեռնային և հիւսիսային ազգերին. նոյնպէս և Անդը—Կասպեան աշխարհի ազգերին՝ մինչեւ Ամու—Դարիա նշանաւոր գետը, ինչպէս ցայսօր (1894) Խոսրովի անունով բերդը[1]) Կախկայի մօտ՝ Անդրկասպեան աշխարհում յայտնի յիշեցնում է, և տեղական աւանդութիւնը ապացուցանում է։ Նմանապէս անցել է 325 թուին Քրիստոսի մեծն Տրդատ մեր թագաւորը Դարբանդու երկաթէ դռնովն մեծ յաղթանակաւ, որ բոլոր լեռնականաց յաղթելով արգելեց այն դռնից այս կողմն անցնել, ինչպէս երբեմն մեծն Աղէքսանդր Մակեդոնացին։

Մեծին Արտաշէսի նման և Տրդատ ստացաւ իւր կինը Ալաններից—Աշխէն թագուհին։

Այսպէս և շատերը մեր թագաւորներից պատերազմով թէ խաղաղութեամբ եկած, հանդիպած կը լինին Դարբանդի պարիսպներին, և վերադարձած, և շատ անգամ օգնած Աղուանից ազգին՝ իբրեւ դրացւոյ և կրօնակցի, ինչպէս և վրացւոց, որոց համար աւելորդ է այս տեղ երկարաբանել։

Դարբանդի համար *Մասեաց Աղաւնին* (1862. սեպտ. յեր. 204. թ. 17. Թէոդոսիա) հետեւեալ համառօտ նկարագրութիւնն է գրում—

«Կովկասեան աշխարհին և բոլոր Ասիոյ հռչակաւոր տեղերէն մէկը Դարբանդ քաղաքն է՝ Կասպից ծովուն վրայ, բարձրադիր ամրապարիսպ ու վաճառաշահ։ Բնակիչը հինգ հազարի չափ կ՚համարուի, մեծ մասը Թուրքմէն։ Կըսուի թէ այս քաղաքը հիմներ է մեծն Աղէքսանդր, և ամուր պարսպով մը պատեր է, որ մինչեւ ցայժմ կեցած է ըստ մասին և նայողներուն վրայ սարսափ կձգէ իւր բարձրութեամբն ու ահագին ընդարձակութեամբը։ Եւ որովհետեւ այն պարսպին մեծամեծ դռներն երկաթէ էին, սովորութիւն եղեր է քաղաքին եւս Տէմիր—Գափու (Դուռն Երկաթի) անուն տալ։

---

[1]) Կայ Խոսրովի անունով բերդ և գիւղ նաեւ Նուխուոյ գաւառի Ղայաբաշ գիւղի մօտ։